«Հաշմանդամություն ունեցող կանանց քաղաքական մասնակցությունը: Խոչընդոտներ և առաջարկություններ»

Հետազոտական ծրագիր
Հաշվետվություն

Հետազոտական խումբ՝

Արմինե Խանանյան
Կարինե Գրիգորյան
Գայանե Գրիգորյան
Արմինե Սահակյան
Աշոտ Մկրտչյան

Գյումրի 2018

Բովանդակություն

Հապավումների ցանկ 3
Երախտիքի խոսք 4
Ներածություն 5
Բացահայտումներ 5
Հիմնախնդրի անհրաժեշտության հիմնավորում 6
Հետազոտության մեթոդաբանություն 7
Հիմնական հասկացությունների սահմանում 9
Արդյունքներ 9
Քաղաքական և քաղաքացիական մասնակցություն 9
Թավշյա ներառական հեղափոխություն 12
Հինգ հարց 15
Հաշմանդամություն ունեցող կանանց քաղաքական մասնակցությանը
խոչընդոտող գործոնները և դրանց կարգավորման ուղիները 17
Ընտրատեղամասերի անմատչելիություն 17
Անմատչելի քարոզարշավ 19
Հանրային վերաբերմունք 21
Ընտանիքի վերաբերմունք 23
Անմատչելի տրանսպորտ 24
Հաշմանդամություն ունեցող կանանց անինքնավստահություն 25
Սոցիալական վիճակ 26
Ոչ ներառական օրենսդրություն 26
Ոչ ներառական մանկություն 26
Այլ խոչընդոտներ 27
Նպաստող գործոններ 27
Առաջարկություններ պետությանը 29
Առաջարկություններ ՀԿ-ներին / Քաղաքացիական հասարակությանը 30
Ամփոփում 30

Հապավումների ցանկ

ԱԺ – Ազգային ժողով

ՁԼՄ – Ձանգվածային լրատվության միջոցներ

ԿՁՆ – Կայուն զարգացման նպատակներ

ԿԸՀ – Կենտրոնական ընտրական հանձնաժողով

ՀԿ – Հասարակական կազմակերպություն

ՀՀ – Հայաստանի Հանրապետություն

ՄԱԿ – Միավորված ազգերի կազմակերպություն

ՏԻՄ – Տեղական ինքնակառավարման մարմիններ

ՔՀԿ – Քաղաքացիական հասարակության կազմակերպություն

ՖԽՔ – Ֆոկուս խմբային քննարկում

CEDAW – Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա

CRPD – Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիա

IFES – Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամ

PR (Public relations) – Հանրային հարաբերություններ

UPR – Համընդհանուր պարբերական դիտարկում

USAID – ԱՄՆ ՄԶԳ / ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն

Երախտիքի խոսք

«Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ-ն 2018 թ.-ի փետրվար-հունիս ամիսներին «Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամ»-ի (IFES-International Foundation for Electoral Systems) ենթադրամաշնորհով իրականացրեց «Դեպի ներառական ընտրություններ» ծրագիրը՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) ֆինանսական աջակցությամբ, որը լուրջ ներդրում հանդիսացավ Հայաստանում հաշմանդամություն ունեցող կանանց քաղաքական և քաղաքացիական մասնակցության ուսումնասիրության, դրանց խթանմանն ուղղված առաջարկությունների մշակման համար: Հետազոտական ծրագիրը հնարավոր դարձավ մեծ թվով մասնակիցների, հետազոտական խմբի, նախաձեռնող «Ագաթ» ՀԿ-ի և տարբեր համագործակից կառույցների, կազմակերպությունների և կամավորների շնորհիվ: Հատուկ երախտագիտությամբ պետք է նշել «Սկարպ» և «Մենք կարող ենք» հասարակական կազմակերպությունների նախագահներ Աշոտ Մկրտչյանի և Արմինե Սահակյանի ներդրումը ծրագրում, ովքեր օգնեցին ֆոկուս խմբային քննարկումների ընթացքում և որպես փորձագետներ կիսեցին ֆիզիկական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատելու իրենց փորձը:

Շատ կարևոր և գնահատելի էր նաև ծրագրի սոցիոլոգ Արմինե Խանանյանի ներդրումը ծրագրի հետազոտության մեջ, ինչպես նաև «Ագաթ» ՀԿ-ի թիմի, հատկապես ծրագրի ղեկավար Կարինե Գրիգորյանի և ծրագրի համակարգող Գայանե Գրիգորյանի, Մարինե Ավետիսյանի, Ռոզա Ավագյանի և Աննա Ղուկասյանի նվիրումը ծրագրին և աջակցությունը հետազոտական գործընթացներին: Հատուկ շնորհակալություն IFES կազմակերպության մատչելիության և ներառման ավագ մասնագետ՝ Վիրջինիա Աթկինսոնին, ներառման մասնագետ Ռեբեկա Աբերգին և մոնիտորինգի ու գնահատման ղեկավար Ելենա Պարադեսին՝ հետազոտության մեթոդոլոգիայի ընտրման և ՖԽՔ հարցերի մշակման ընթացքում տեխնիկական աջակցություն ցուցաբերելու համար:

Եվ վերջապես, հետազոտական թիմը հատուկ շնորհակալություն է հայտնում ֆոկուս խմբային քննարկումների բոլոր մասնակիցներին՝ Հայաստանի տարբեր քաղաքաբնակ և գյուղաբնակ վայրերից հաշմանդամություն ունեցող և չունեցող կանանց և տղամարդկանց, ովքեր մեծ սիրով և նվիրումով մասնակցեցին հետազոտությանն ու տրամադրեցին անչափ կարևոր և անհրաժեշտ տեղեկատվություն:

Ներածություն

Սույն հաշվետվությունը ներկայացնում է «Ազաթ» ՀԿ-ի կողմից IFES-ի աջակցությամբ «Դեպի ներառական ընտրություններ» ծրագրի շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքները: Հետազոտության իրականացումը հնարավոր դարձավ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) ֆինանսական աջակցության շնորհիվ:
Հետազոտության նպատակն է հաշմանդամություն ունեցող կանանց քաղաքական մասնակցությունը խոչընդոտող գործոնների վերհանումը և դրանց հասցեագրման ուղիների բացահայտումը:
Հաշվետվության առաջին մասն անդրադառնում է հետազոտության մեթոդական և ընթացակարգային ասպեկտներին: Հետազոտության ծրագրի մշակման և տվյալների հավաքագրման փուլում հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության սկզբունքը հանդիսանում է հետազոտության իրականացման առանցք: «Ազաթ» ՀԿ-ն կապ է հաստատել Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիայի անդամ կազմակերպությունների հետ՝ նրանց շահառուներին ներգրավելու նպատակով, և դրա շնորհիվ ապահովվել է տարբեր տեսակի հաշմանդամություն (հատկապես՝ հոգեբանասոցիալական, լսողության կամ տեսողական խնդիրներ) ունեցող անձանց լիարժեք մասնակցությունը ֆոկուս խմբային քննարկումներին:
Այնուհետև հաշվետվությունը ներկայացնում է հետազոտության արդյունքները: Հաշմանդամություն ունեցող կանանց քաղաքական և քաղաքացիական մասնակցությանը խոչընդոտող բացահայտված հիմնական գործոնները՝ մատչելիություն, օրենսդրական անկատարելիություն և այլն ազդում են նաև հաշմանդամություն ունեցող տղամարդկանց քաղաքական մասնակցության վրա: Այնուամենայնիվ, հասարակության վերաբերմունքը, հայ կարծրատիպային պատրիարխալ հասարակությունը և ընտանիքի անտարբերությունը ավելացնում են հաշմանդամություն ունեցող կանանց մարգինալացումը քաղաքական գործընթացներից՝ նրանց դարձնելով առավել խոցելի:
Հաշվետվությունն անդրադառնում է «Թավշյա հեղափոխությանը» հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությանը՝ ցույց տալով վերջիններիս հատուկ դերը հեղափոխության բովանդակության և ընթացքի վրա:
Հաշվետվության վերջին հատվածը նվիրված է քաղաքացիական հասարակությանը և պետությանն ուղղված առաջարկներին:

Բացահայտումներ

Այս զեկույցում արվել է երեք հիմնական բացահայտում.

- Հաշմանդամություն ունեցող կանանց քաղաքական մասնակցության, ընտրություններին մասնակցության առանցքային իրավունքը չի ապահովվում պետության կողմից:
- Հաշմանդամություն ունեցող կանայք կարող են ակտիվ լինել քաղաքական կյանքում, եթե բարձրացվի նրանց իրազեկությունը և նրանք հզորանան: Երբ նրանք հաղթահարեն իրենց ներքին վախերը, կկարողանան արագ զարգացնել իրենց հմտությունները և կարողությունները և ավելի ակտիվ լինել ինչպես քաղաքացիական, այնպես էլ քաղաքական կյանքում:
- Վերջին կարևոր բացահայտումն այն է, որ հաշմանդամություն ունեցող կանայք ունակ են հայտնաբերել և գնահատել խտրական երևույթները, ուստի պետությունը պետք է

ակտիվորեն ներգրավի հաշմանդամություն ունեցող կանանց բոլոր օրենսդրական և նրանց առնչվող քաղաքականության մշակման գործընթացներում:

Հետազոտության մյուս բացահայտումներից է նաև այն, որ Հայաստանում հաշմանդամություն ունեցող կանանց քաղաքական մասնակցությունը զգալիորեն ցածր է մյուս խմբերի համեմատ: Սակայն օնլայն և օֆլայն քննարկումներում նրանց ներգրավվածության տոկոսը ավելի բարձր է՝ համեմատած հաշմանդամություն չունեցող անձանց հետ, քանի որ այս պարագայում նրանք ավելի քիչ դժվարությունների են բախվում՝ կապված միջավայրի մատչելիության հետ: Քաղաքաբնակ հաշմանդամություն ունեցող կանայք առավել ակտիվ են և ավելի շատ հնարավորություններ ունեն պետական պաշտոնյաների հետ հանդիպելու, քան հաշմանդամություն ունեցող գյուղաբնակ կանայք: Անմատչելի տրանսպորտային միջոցները խոչընդոտ են հանդիսանում հատկապես գյուղաբնակ հաշմանդամություն ունեցող անձանց քաղաքական մասնակցության համար: ԿԸՀ անդամների վերաբերմունքը ևս կարող է խոչընդոտել հաշմանդամություն ունեցող անձանց քվեարկելու իրավունքի իրացմանը: Նույնիսկ հաշմանդամություն ունեցող տղամարդիկ ունեն բացասական կարծրատիպեր հաշմանդամություն ունեցող կանանց քաղաքական մասնակցության վերաբերյալ:

Հիմնախնդրի անհրաժեշտության հիմնավորում

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության վիճակագրության համաձայն, Հայաստանում 2018 թվականին գրանցված է հաշմանդամություն ունեցող 193.000 անձ, որից 90.000-ը հաշմանդամություն ունեցող կանայք են: Հայաստանում միայն բժշկական և սոցիալական փորձաքննության հանձնաժողովի կողմից հաշմանդամ ճանաչված անձինք կարող են ստանալ համապատասխան ծառայություններ և հաշմանդամության կենսաթոշակ: Հայաստանում հաշմանդամության ճանաչման գործընթացը շատ բարդ է և ունի խիստ չափանիշներ, քանի որ կառավարությունը փորձում է հնարավորինս խնայել ֆինանսական ռեսուրսները: Իրականում հաշմանդամություն ունեցող անձանց թիվն ավելի բարձր է: Վերջիններս, ինչպես հաշմանդամություն ունեցող բոլոր կանայք և աղջիկներն ամբողջ աշխարհում, Հայաստանում նույնպես առերեսվում են սեռով և հաշմանդամությամբ պայմանավորված խտրականության բազմաթիվ դրսևորումների՝ իրենց կրթության, զբաղվածության, առողջապահական, այդ թվում նաև քաղաքական մասնակցության և մյուս իրավունքներն իրացնելիս:

2010 թ.-ին ՀՀ կողմից վավերացված «ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան» անդրադառնում է հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությանը քաղաքական կյանքում և հաշմանդամություն ունեցող կանանց նկատմամբ բազմակի խտրականության խնդիրներին: Հոդված 29-ում մասնակից պետությունները պարտավորվում են ապահովել, որ հաշմանդամություն ունեցող անձինք մյուսների հետ հավասար հիմունքներով, ուղղակիորեն կամ ազատ կերպով ընտրված ներկայացուցիչների միջոցով, արդյունավետ և լիարժեք կերպով մասնակցություն ունենան քաղաքական և հասարակական կյանքին՝ ներառյալ քվեարկելու և ընտրվելու նրանց իրավունքը և հնարավորությունը:

6-րդ հոդվածը սահմանում է, որ հաշմանդամություն ունեցող կանայք և աղջիկները ենթարկվում են բազմակի խտրականության, և այդ կապակցությամբ մասնակից

պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն՝ ապահովելու նրանց համար մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների լիակատար և հավասար իրացումը: Մասնակից պետությունները պետք է նաև «ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ միջոցները հաշմանդամություն ունեցող կանանց լիարժեք զարգացման, առաջընթացի և հզորացման համար՝ երաշխավորելով սույն Կոնվենցիայով սահմանված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների իրականացումն ու օգտագործումը»:

2017 թ. մայիսին Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով ՄԱԿ-ի կոմիտեն Հայաստանի զեկույցի եզրափակիչ դիտարկումներում խորհուրդ է տալիս, որ պետությունը ձեռնարկի իրավական և այլ միջոցներ, որոնք կապահովեն հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց քաղաքական և հանրային մասնակցությունը՝ ներառյալ քվեարկելու և ընտրություններին մասնակցելու իրավունքը: Նշվում է նաև, որ քվեարկության ընթացակարգերը, հարմարությունները և նյութերը պետք է մատչելի ձևաչափով հասանելի դառնան հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց համար և նպաստեն նրանց, մասնավորապես կանանց, մասնակցությանը քաղաքական կյանքում և հանրային որոշումների ընդունման գործընթացներում:

Հայաստանը նաև վավերացրել է Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման Կոնվենցիան (CEDAW), որը պետություններին պարտավորեցնում է խթանել և ապահովել կանանց քաղաքական մասնակցությունը՝ այդ թվում նաև հաշմանդամություն ունեցող կանանց մասնակցությունը:

Սույն հետազոտությունը կնպաստի CRPD-ի և CEDAW-ի շրջանակներում պետության պարտավորությունների իրականացման մշտադիտարկմանը՝ նպատակ ունենալով վեր հանել հաշմանդամություն ունեցող կանանց քաղաքական մասնակցության մակարդակը, այն խոչընդոտող գործոնները և հնարավոր լուծումները:

Սույն հետազոտության արդյունքները նաև կնպաստեն հաշմանդամություն ունեցող կանանց քաղաքական մասնակցությունն ապահովող ներառական օրենսդրության և քաղաքականության բարելավմանն ու կատարելագործմանը՝ որպես վերջնարդյունք ունենալով նաև առաջարկություններ:

Հետազոտության մեթոդաբանություն

Հետազոտության համար օգտագործվեց IFES- ի կողմից մշակված հատվողականության (միջսեկցիոնալ) գնահատման կառուցվածքը և «Ազաթ» ՀԿ-ի կողմից տեղայնացվեց այս զեկույցի համար: Որպես տվյալների հավաքագրման հիմնական մեթոդ, ընտրվել են ֆոկուս խմբային քննարկումները (ՖԽՔ) և փաստաթղթավորվել են մասնակցային գնահատման ինտեգրված սկզբունքները, այդ թվում բազմակողմ հեռանկարների ապահովման ժողովրդավարական մեխանիզմները, ֆասիլիտացիան /համակարգումը, որը հավաքագրում էր անհատական կարծիքներ այն անձանցից, ովքեր այլ պարագայում հնարավոր է չարտահայտվեին, ինչպես նաև մասնակիցների ներգրավվածությունը քանակական տվյալների վերլուծության մեջ: Անցկացվել է վեց ֆոկուս խմբային քննարկում: Յուրաքանչյուր ֆոկուս խմբի կազմը փոփոխվել է, որպեսզի վերահսկվեն հիմնական գործոնները, ինչպիսիք են՝ գենդերը, հաշմանդամությունը և բնակավայրը (քաղաքայինն ընդդեմ գյուղականի):

Հետազոտության գործիքը ապահովում է մասնակցային ընթացակարգը՝ տեսանելի և համագործակցային հարթակի միջոցով: Երկու-երեք անձից բաղկացած խմբային

աշխատանքներն ու մտքերի գրոհն ապահովում էին յուրաքանչյուր անձի ներդրումը վերլուծության գործընթացին:
Գործընթացը հնարավորինս ներառական էր հաշմանդամություն ունեցող մասնակիցների համար: Վարողը նկարագրում էր նկարները տեսողական հաշմանդամություն ունեցող մասնակիցների համար: Լսողության խնդիրներ ունեցող մասնակիցներին տրամադրվում էր ժեստերի լեզվի թարգմանություն:
Վեց ֆոկուս խմբային քննարկում է իրականացվել հետևյալ խմբերի հետ՝

- Հաշմանդամություն ունեցող 12 քաղաքաբնակ կանայք (Երևան, Գյումրի, Վանաձոր, Արթիկ),
- Հաշմանդամություն ունեցող 12 քաղաքաբնակ տղամարդիկ (Երևան, Գյումրի, Հոկտեմբերյան, Գավառ),
- Հաշմանդամություն ունեցող 12 գյուղաբնակ կանայք (գյուղ Հոռոմ, Ջրափի, Ոսկեհասկ, Լուսաղբյուր, Շիրակավան, Սպիտակ),
- Հաշմանդամություն ունեցող 9 գյուղաբնակ տղամարդիկ (գյուղ Մարմաշեն, Արթիկ տարածաշրջան, Սպիտակ, Սարատակ),
- Հաշմանդամություն չունեցող 12 քաղաքաբնակ և գյուղաբնակ կանայք (Երևան, Գյումրի, Սիսիան, Աբովյան, գյուղ Թաիրով, գյուղ Շիրակավան),
- Հաշմանդամություն չունեցող 12 քաղաքաբնակ և գյուղաբնակ տղամարդիկ (Գյումրի, Վանաձոր, Ձորաղբյուր, Սպիտակ, գյուղ Հոռոմ):

Բացի ֆոկուս խմբային քննարկումներից, հարցազրույցներ են անցկացվել հաշմանդամություն ունեցող երկու ակտիվ կանանց հետ: Նրանցից մեկը ներգրավված է հասարակական ոլորտում, մյուսը՝ քաղաքական ակտիվ գործընթացներում:

Ֆոկուս խմբային քննարկում հաշմանդամություն ունեցող քաղաքաբնակ տղամարդկանց հետ

Քննարկման ուղեցույցի (Հավելված 1.) ներածական՝ առաջին հատվածում, խմբի անդամները մտագրոհում են՝ բերելով քաղաքական և քաղաքացիական մասնակցության դրսևորման օրինակներ: Արդյունքում, վարողի ուղղորդմամբ, խումբը հանգում է այս կատեգորիաների ընդհանրական, բոլորի համար ընդունելի սահմանումներին: Առաջին փուլի բարեհաջող ավարտից հետո անցում է կատարվում քննարկման բուն էությանը՝ հաշմանդամություն ունեցող կանանց քաղաքական մասնակցությանը: Առանցքում հիմնախնդրի ուժային վերլուծությունն է՝ կրկին մտագրոհի, ինչպես նաև 2-3 հոգանոց խմբային աշխատանքի միջոցով, որի օգնությամբ վեր են հանվում նպաստող, խոչընդոտող գործոնները, դրանց հաստեղագրման մեխանիզմները: Երրորդ՝ եզրափակիչ փուլում, մասնակիցներին ներկայացվում է թեմային առնչվող 5 դատողություն, որոնց վերաբերյալ վերջիններս գնահատում են իրենց համաձայնությունը՝ բաց քվեարկությամբ:

Հետազոտության շրջանակներում տեղի է ունեցել նաև փորձագիտական խմբային ազատ քննարկում, որի առանցքն են հանդիսացել հաշմանդամություն ունեցող կանանց մասնակցությունը «Թավշյա հեղափոխությանը», ինչպես նաև քվեարկությանը մասնակցելու դժվարություններ ունեցող ընտրողների համար քվեարկությունը մատչելի դարձնելու նպատակով լրացուցիչ հնարավորություններ սահմանելու մասին ՀՀ 2016թ.-ի որոշման բացերը:

Հիմնական հասկացությունների սահմանում

Այս զեկույցի համատեքստում, ինչպես սահմանված է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայում, հաշմանդամություն ունեցող անձինք ներառում են այն անձանց, որոնք ունեն երկարաժամկետ ֆիզիկական, հոգեկան, մտավոր և զգայական դժվարություններ, որոնք, տարբեր արգելքների հետ փոխազդեցության արդյունքում, արգելակում են նրանց լիակատար և արդյունավետ մասնակցությունը հասարակության կյանքում՝ մյուսների հետ հավասար հիմունքներով:

Քաղաքական մասնակցությունն ընդգրկում է սովորական քաղաքացիների գործողություններն ու գործունեության այն ձևերը, որոնք ինչ-որ կերպ ուղղված են ազդելու տվյալ հասարակության քաղաքական արդյունքների վրա, օրինակ, քվեարկության կամ պաշտոնավարման:

Քաղաքացիական ներգրավվածությունը պայմանականորոն վերաբերում է սովորական քաղաքացիների գործունեության այն ձևերին, որոնք միտված են ազդելու հասարակական իրողություններին, որոնք վերաբերում են ուրիշներին, ինչպես նաև դուրս են սեփական ընտանիքից և մտերիմ ընկերների շրջանակից: Այս իրողությունների շարքում են նաև բնապահպանական հիմնախնդիրները:

Արդյունքներ
Քաղաքական և քաղաքացիական մասնակցություն

Քաղաքական և քաղաքացիական մասնակցության սահմանումները վեր են հանվել մասնակցային քննարկմամբ: Երբ խմբի անդամների մոտ առաջանում էին հակասական կարծիքներ, վարողի ուղղորդմամբ՝ բոլոր հիմնավորումները և հակափաստարկները լսվում էին մինչ այն փուլը, երբ խումբը հանգում էր հետազոտության շրջանակներում ուրվագծված սահմանումներին (Տե՛ս, Հիմնական հասկացությունների սահմանում): Արդյունքում, վերջիններս հասկանալի էին դառնում խմբի բոլոր անդամների համար:

Ստորև ներկայացված են քաղաքացիական և քաղաքական մասնակցության և ներգրավվածության դրսևորումները և տարածվածությունը հետազոտության մասնակիցների շրջանում:

Աղյուսակ 1.

	Բոլոր մասնակիցները	Հաշմանդամություն չունեցող անձինք	Հաշմանդամություն ունեցող անձինք	Քաղաքաբնակ հաշմանդամություն ունեցող կանայք	Գյուղաբնակ հաշմանդամություն ունեցող կանայք	Հաշմանդամություն ունեցող կանայք	Հաշմանդամություն չունեցող կանայք
	(60-ից)	(20-ից)	(40-ից)	(10-ից)	(9-ից)	(19-ից)	(12-ից)
Քաղաքական Մասնակցություն							
Մասնակցություն ընտրություններին	87%	90%	85%	80%	89%	84%	83%
Մասնակցություն ցույցերին և երթերին	65%	70%	63%	60%	33%	47%	58%
Կուսակցական պատկանելիություն	18%	35%	10%	0%	11%	5%	25%
Ընտրություններին դիտորդություն	15%	20%	13%	20%	11%	16%	8%
Ընտրություններին վստահված անձ լինելը	8%	25%	0%	0%	0%	0%	8%
Մասնակցություն գործադուլին, դասադուլին	7%	0%	10%	10%	0%	5%	0%
Ընտրական հանձնաժողովին անդամակցություն / նախագահություն	5%	10%	3%	0%	0%	0%	17%
Մասնակցություն քաղաքական որոշումների լսումներին	5%	0%	8%	30%	0%	16%	0%
Պետական կառույցում աշխատանք / պաշտոնի զբաղեցում	5%	0%	8%	20%	0%	11%	0%
Ընտրություններին թեկնածու առաջադրվելը	7%	5%	8%	0%	0%	0%	0%
Քաղաքական օնլայն, օֆլայն քննարկումներ	17%	0%	25%	30%	22%	26%	0%
Քաղաքական կարծիքի արտահայտում	33%	60%	20%	30%	22%	26%	100%

Քաղաքացիական մասնակցություն							
Մասնակցություն ցույցերին և երթերին/սոցիալական բովանդակությամբ/	18%	50%	3%	0%	0%	0%	50%
Մասնակցություն ծառա-տունկի կամ շաբաթօրյակի	48%	62%	40%	70%	44%	58%	17%
ՀԿ առաջնորդություն կամ անդամակցություն	38%	24%	43%	70%	56%	63%	25%
Բնապահպանական ակտիվիզմ	8%	14%	5%	0%	0%	0%	0%

Աղյուսակում պատկերված տոկոսային հարաբերակցությունը ցույց է տալիս, որ հաշմանդամություն ունեցող կանանց քաղաքական մասնակցությունը համեմատության մեջ ավելի ցածր է, սակայն վերջիններիս ներգրավվածությունը նույնիսկ ավելի բարձր է, որը ավելի քիչ խոչընդոտների է առնչվում՝ կապված մատչելիության հետ (տրանսպորտ, շենքեր և այլն):

Այսպիսով, հաշմանդամություն ունեցող կանայք ավելի շատ են մասնակցում օնլայն և օֆլայն քննարկումներին՝ ի համեմատություն հաշմանդամություն չունեցողների: Մինչդեռ հաշմանդամություն ունեցող գյուղաբնակ կանանց քաղաքական և քաղաքացիական մասնակցությունը համեմատության մեջ ավելի ցածր է, քան հաշմանդամություն ունեցող քաղաքաբնակներինը:

Չնայած ընտրությունների հետ կապված բոլոր ընթացակարգերը համարյա բոլոր խմբերում վերագրվեց քաղաքականությանը, անկախ դիտորդությունը որոշ մասնակիցների կողմից այդպես էլ մնաց քաղաքական և քաղաքացիական մասնակցության հատման տիրույթում: Այս տիրույթում է նաև մասնակցությունը ցույցերին և երթերին: Կախված ակցիայի բովանդակությունից՝ նպատակից, կարգախոսներից, դրդապատճառից, դրանց մասնակցությունը կարող է լինել քաղաքական (ինչպես «Թավշյա հեղափոխության» դեպքում) կամ քաղաքացիական (ինչպես «Էլեկտրիկ Երևանի» դեպքում):

Տարանջատելուց բացի մասնակիցները քաղաքացիական և քաղաքական ակտիվությունը տեսնում են սերտ կապվածության մեջ:

> «Լավագույն քաղաքացիական դրսևորումներից մեկը քաղաքական մասնակցությունն է, քանի որ լավագույն քաղաքացին պետք է քաղաքական ակտիվություն ցուցաբերի»:
>
> *Արմինե, հաշմանդամություն ունեցող կին, Երևան*

Թավշյա ներառական հեղափոխություն

Սույն թվականի ապրիլին մեկնարկած ցույցերի, երթերի, քաղաքացիական անհնազանդության զանգվածային դրսևորումների արդյունքում ապրիլի 23-ին ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանը հրաժարական տվեց, որին հետևեց Ազգային ժողովի կողմից «ժողովրդի թեկնածու» Նիկոլ Փաշինյանին վարչապետի պաշտոնում ընտրելը: Ոչ բռնի, խաղաղ գործողություններով ուղեկցված իշխանափոխությունը ստացավ «Թավշյա հեղափոխություն» անունը:

Հաշմանդամություն ունեցող կանայք ակտիվ դերակատարում ունեցան «Թավշյա հեղափոխության» ընթացքում: Զարուհի Բաթոյանը, ով ակնառու հաշմանդամություն ունեցող ակտիվիստ կին է, մասնակցել է Հայաստանի բոլոր քաղաքական գործընթացներին և հեղափոխական գործողություններին: «Թավշյա հեղափոխության» ժամանակ նա հասկացավ, որ կարող է «ներառականության» ձայնը լսելի դարձնել: Հանրապետության հրապարակում տեղի ունեցած հանրահավաքի ժամանակ Զարուհի Բաթոյանի առաջարկով հայտարարվեց «Կաթսա-շերեփ» ակցիայի մասին. քաղաքացիները ժամը 23:00-ին իրենց պատուհաններից պետք է դուրս հանեին կաթսաները և 15 րոպե հարվածեին շերեփներով: «Կաթսա-շերեփ» ակցիային միացան բազմաթիվ կանայք՝ դրանով իսկ հայտնելով իրենց մասնակցությունն ու համերաշխությունը շարժմանը և իրենց տներից մաս կազմելով զանգվածային հակակառավարական բողոքներին: Հազարավոր կանանց կողմից բարձրացրած աղմուկը կարելի էր նկարագրել որպես «հնչյունների կոպիտ, խառնաշփոթ խառնուրդ»: Զարուհին կարողացավ առաջարկել ներառական բողոքի գաղափար, որը համախմբելու էր բոլոր մարդկանց քաղաքական գործընթացներում, նույնիսկ նրանց, ովքեր փողոցներում չէին, բայց ուզում էին մասնակցել բողոքի ակցիաներին: «Կաթսա-շերեփ» ակցիային միացան բազմաթիվ հաշմանդամություն ունեցող և չունեցող կանայք, ովքեր ցանկանում էին մասնակցել բողոքի ակցիաներին, սակայն չէին կարողացել դուրս գալ իրենց տներից: Որոշ կանանց փողոց դուրս գալ խանգարում էր հաշմանդամությունը, իսկ մյուսներին՝ պատրիարխալ հասարակությունը:

Հաշմանդամություն ունեցող ակտիվիստ և քաղաքական գործիչ Զարուհի Բաթոյանը «Թավշյա հեղափոխության» հանրահավաքի ժամանակ խոսում է Երևանի Հանրապետության հրապարակում:

Արև Մելքոնյանը, ով անվասայլակ օգտագործող կին է, միշտ գտնվում էր բողոքի ցույցերի և երթերի առաջնագծում. նա գիշերում էր դրսում՝ իր ընկերներին ցույց տալու համար, որ քաղաքական պայքարը կարևոր է բոլորի համար, և Հայաստանի բոլոր քաղաքացիները, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք, կարող են օգտվել երկրի քաղաքական փոփոխություններից:

Հետազոտության շրջանակում փորձագիտական խմբային քննարկումը բացահայտեց, որ հեղափոխության հատկանշական կողմերից էր ներառականությունը: Գյումրի քաղաքում մեկնարկած նախաձեռնությունների շարքին մասնակցել են բոլոր տարիքի կանայք և տղամարդիկ տարբեր քաղաքներից, տարատեսակ զբաղվածությամբ քաղաքացիներ, երեխաներ, ծերեր, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձինք:

Փորձագետները՝ հաշմանդամություն ունեցող ակտիվ երիտասարդները հավաստեցին, որ հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը «Թավշյա հեղափոխությանը» նպաստել է.

1. Մյուս քաղաքացիների **քաղաքական ակտիվության բարձրացմանը:**

> «Ես չեմ կարծում, որ մենք՝ հաշմանդամություն ունեցողներս, փոքր մարդ ենք այս ամենի մեջ, որովհետև երբ ես *(հեղինակը տեսողության խնդիր ունի)* Արևի հետ սայլակը բռնած գնում էի, մեզ նկարում և ուրախանում էին. «Հալալ ա Ձեզ»: Ես ասացի՝ Արև, դու հասկանու՞մ ես՝ մենք ինչ մոտիվացիա կարող ենք հանդիսանալ մարդկանց համար, որ իրանք դուրս գան, էս ընդհանուր պայքարին մասնակցեն»:
>
> *Հաշմանդամություն ունեցող տղամարդ, Երևան*

> «Մեր մոտ՝ Գյումրիում, ես դառել էի էտալոն, որ մասնակցում եմ ցույցերին. նույնիսկ ինձ ասում էին. «Եթե դու ուղղակի գաս, կանգնես հրապարակում, դու այդպես դուխ կտաս մնացածին»:
>
> *Հաշմանդամություն ունեցող տղամարդ, Գյումրի*

2. Մյուս քաղաքացիների **քաղաքական գիտակցության բարձրացմանը:**

> «Ինձ համար կարևոր էր քաղաքացիական կրթությունը և քաղաքացիական գիտակցության բարձրացումը, որի մեջ ներգրավված էին հաշմանդամություն ունեցող անձինք: Օրինակ, երբ ես ելույթ էի ունենում, ես գիտակցում էի, որ իմ ելույթը կարևոր է ոչ թե, որովհետև ես կարևոր ու լավ բան եմ ասում, այլ որովհետև ինձ տեսնում են մարդիկ, հաշմանդամություն ունեցող մարդիկ և կանայք. այդ երկու խմբերը հատկապես շատ էին ոգևորվում, և ես իրենց համար էի ելույթ ունենում, որպեսզի իրենք անտեսանելի չլինեն, իրենց մասին խոսվի և իրենք խրախուսվեն»:
>
> *Հաշմանդամություն ունեցող կին, Երևան*

3. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման **հիմնախնդիրների** հետ կապված, ընդհուպ մինչև ներառական կրթության անհրաժեշտության **բարձրաձայնմանը**:

> «Օրինակ, Նելլա տատիկի դեպքը, որ լսողության խնդիրներ ունի: Օրինակ՝ հենց նրա առաջին շարքում կանգնելը. նա շուրթերով է կարդում: Ես առաջին անգամ էի ԶԼՄ-ով լսում, որ ինչ-որ մեկն ասում է, որ շուրթերով է կարդում: Այդ տարիքով կինը պատմում էր իր՝ հաշմանդամության պատճառով հանդիպած կրթության դժվարությունների մասին»:
>
> *Հաշմանդամություն ունեցող տղամարդ, Երևան*

4. Հեղափոխության **ոչ բռնի, խաղաղ** ընթացքին:

> «Օգտվելով այն հանգամանքից, որ ոստիկանները, ինչ-ինչ պատճառներից ելնելով, ինձ բերման չեն ենթարկի, ես ստանձնել էի ցուցարարի և ոստիկանի միջև բանակցողի դերակատարությունը»:
>
> *Հաշմանդամություն ունեցող տղամարդ, Գյումրի*

Գյումրիում ՀԿ ղեկավար և հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպան Կարինե Գրիգորյանը Հայաստանում խորհրդարանական ընտրություններին ընդառաջ քաղաքական պլատֆորմ է ստորագրում «Ազատ դեմոկրատներ» քաղաքական կուսակցության ներկայացուցչի հետ:

Հինգ հարց

6 ՖԽ քննարկումների 60 մասնակիցներից յուրաքանչյուրը պատասխանել է հինգ հարցի: Ստորև ներկայացնում ենք պատասխանների բաշխվածությունը՝ հաշմանդամություն ունեցող կին ռեսպոնդենտների և մնացած մասնակիցների տարանջատմամբ:

Ինչպես երևում է «Գծապատկեր 1»-ում, ի տարբերություն մյուս խմբերի՝ հաշմանդամություն ունեցող կանանց ճնշող մեծամասնությունը համարում է, որ պետական մարմինները չեն ապահովում իրենց՝ ընտրություններին լիարժեք մասնակցելու իրավունքի իրացումը:



Հաշմանդամություն ունեցող կանայք համեմատության մեջ նաև ցածր են գնահատում սեփական քաղաքական և քաղաքացիական մասնակցությունը: («Գծապատկեր 2, 3»)



Գծապատկեր 3. «Ես ակտիվ քաղաքացի եմ»



«Գծապատկեր 2, 3»-ում կարելի է տեսնել, որ հաշմանդամություն ունեցող կանանց մեծամասնությունը նշել է, որ իրենք ակտիվորեն մասնակցում են քաղաքական կյանքին և իրենց համարում են ակտիվ քաղաքացիներ: Սա, հավանաբար, ֆոկուս խմբային քննարկումների համար ընտրված մասնակիցների ընտրության արդյունք է, ովքեր հաշմանդամություն ունեցող համեմատաբար ակտիվ կանայք էին, և որոնցից շատերը հանդիսանում են հասարակական կազմակերպությունների և կոալիցիաների անդամներ:

Գծապատկեր 4. «Հաշմանդամություն ունեցող անձանց քաղաքական մասնակցությունը նպաստում է համայնքի/երկրի զարգացմանը»



Գծապատկեր 5. «Կանանց քաղաքական մասնակցությունը նպաստում է համայնքի/ երկրի զարգացմանը»



«Գծապատկեր 3, 4»-ից կարելի է եզրակացնել, որ ֆոկուս խմբային քննարկումների մասնակիցները հիմնականում համարում են, որ թե՛ հաշմանդամություն ունեցող անձանց, թե՛ կանանց մասնակցությունը քաղաքական գործընթացների տարբեր մակարդակներում դրական կանդրադառնա համայնքի և երկրի զարգացման վրա:

Համեմատելով 4-րդ և 5-րդ գծապատկերները՝ մենք տեսնում ենք, որ մասնակիցներից ոչ մեկը բացարձակապես դեմ չի եղել այն փաստարկին, որ հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավվածությունը կարող է նպաստել հասարակության զարգացմանը, մինչդեռ մասնակիցների 2% -ը բացարձակապես դեմ է այն փաստարկին, որ հաշմանդամություն ունեցող կանանց ներգրավվածությունը քաղաքականության մեջ կարող է օգտակար լինել:

Իրենց տեսակետի հիմնավորումների շարքում մասնակիցները նշել են.

- Հաշմանդամություն ունեցող անձինք ավելի հմուտ են խնդրի հետ առերեսվելու և այն լուծելու հարցում: Նրանք իրենց առօրյա կյանքում տարբեր խոչընդոտների են բախվում և կարողանում են լուծումներ գտնել այդ խոչընդոտների հաղթահարման համար: Ուստի հաշմանդամություն ունեցող անձինք կարող են լինել անչափ ստեղծարար և կրեատիվ, օգտակար մասնակցություն ունենալ համայնքի և երկրի զարգացմանը:
- Կանանց և հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերող հարցերով պետք է զբաղվեն հենց այդ խմբերի ներկայացուցիչները:
- Ըստ մեր Սահմանադրության՝ բոլոր քաղաքացիներն ունեն քաղաքականությամբ զբաղվելու նույն իրավունքները:

Հաշմանդամություն ունեցող կանանց քաղաքական մասնակցությանը խոչընդոտող գործոնները և դրանց կարգավորման ուղիները

Ընտրատեղամասերի անմատչելիություն

Կարևորելով մասնակցությունը ընտրություններին, որպես քաղաքական մասնակցության առանցք, գրեթե բոլոր խմբերը անդրադարձել են ընտրատեղամասերի անմատչելիությանը: Դրա տակ ՖԽՔ մասնակիցները հասկանում են ընտրատեղամասերում շեմային թեքահարթակների, դռների համապատասխան լայնության, բազրիքների առկայության, քվեախցիկների հարմարության պայմանները ֆիզիկական հաշմանդամություն ունեցող անձանց համար, կաղապարի առկայություն տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար, ինչպես նաև աջակցող այլ տեխնոլոգիաներ տարբեր հաշմանդամություն ունեցող անձանց համար:

«Ինձ դիտորդ էին առաջարկել նախորդ խորհրդարանական ընտրություններին, բայց ես, ռեալ դատելով իրավիճակը, ընտրատարածքների անմատչելությունը և, քանի որ երկար ժամանակ էի մնալու, սանհանգույցի անմատչելությունը, ուստի մերժեցի»:

Անվասայլակով տեղաշարժվող հաշմանդամություն ունեցող գյուղաբնակ կին

«Մեր ընտրատարածքում կա երկու ընտրատեղամաս, երկուսն էլ անմատչելի են սայլակից օգտվող անձանց համար»:

Ֆիզիկական հաշմանդամություն ունեցող կին, ք. Երևան

Մասնակիցները նաև նշել են 2017 թ. խորհրդարանական ընտրությունների ժամանակ կաղապարի բացակայությունը:

«Ես չեմ մասնակցել վերջին խորհրդարանական ընտրություններին, քանի որ նրանք փոխել էին ընտրական օրենսգիրքն ու ընթացակարգերը, և բավականաչափ ժամանակ չկար Բրայլի տառատեսակով հատուկ քվեաթերթիկներ տպելու կամ կաղապար տրամադրելու համար»:

Տեսողության խնդիր ունեցող տղամարդ, ք. Երևան

Հաշմանդամություն չունեցող կանանց խումբը նաև հավելել է ընտրատեղամասերում հատուկ իրազեկ մասնագետների բացակայությունը, ինչը կրկին նպաստում է ընտրատեղամասերի անմատչելիությանը:

Որպես առաջնահերթ խոչընդոտ դիտարկելով ընտրատեղամասերի անմատչելիությունը, ՖԽՔ մասնակիցները առաջարկում են հետևյալ հասցեագրումները:

- Բողոքի ակցիաների կազմակերպմամբ խնդրի բարձրաձայնում,
- Կոնվենցիայի մոնիտորինգ՝ հաշմանդամություն ունեցող կանանց նախաձեռնությամբ,
- Շահերի պաշտպանություն՝ հաշմանդամություն ունեցող կանանց նախաձեռնությամբ:

«Անհրաժեշտ է մասնակցել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին օրենքի քննարկումներին, լսումներին և անել առաջարկություններ՝ ինչպես ջատագովել է Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիան»:

Հաշմանդամություն ունեցող կին, ք. Երևան

- Դիմում-նամակ ՏԻՄ-երին,
- Օրենսդրական բարեփոխումներ
  - Ի դեմս Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիայի՝ հաշմանդամություն ունեցող անձանց ակտիվ մասնակցությունը Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին օրենքի քննարկումներին, լսումներին:
- Հանձնաժողովի անդամների համար նախատեսված սեմինարներում ընդգրկել հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատելու էթիկային վերաբերող բաղադրիչներ,
- Ոլորտի ֆինանսավորման ավելացման ջատագովություն,
- ԶԼՄ-ներում և սոցիալական մեդիայում խնդրի լուսաբանում,
- Ներառական կրթություն:

«Ներառական կրթության զարգացումը հանրակրթական դպրոցներում և մանկապարտեզներում նույնպես նպաստում է ընտրատեղամասերի մատչելիությանը, քանի որ ընտրությունները հիմնականում իրականացվում են կրթօջախների շենքերում»:

Հաշմանդամություն չունեցող գյուղաբնակ տղամարդ

Անմատչելի քարոզարշավ

Ընտրություններին առնչվող մեկ այլ գործոն է անմատչելի քարոզարշավը: Այն խոչընդոտում է հատկապես լսողության, տեսողության և մտավոր խնդիրներ ունեցող անձանց քաղաքական իրավունքի իրացմանը՝ ընտրություններին մասնակցելու միջոցով: Այն դրսևորվում է Բրայլյան թարգմանության, ենթագրերի, լուսագրերի, աուդիոտարբերակի և թարգմանիչների բացակայությամբ, ինչպես նաև սովորելու դժվարություններ ունեցող անձանց համար տեքստի անմատչելիությամբ: Արդյունքում ոտնահարվում է հաշմանդամություն ունեցող անձի քաղաքական դիրքորոշման անկախ ձևավորման սկզբունքը:

Քարոզարշավի գործընթացը նաև անմատչելի է ֆիզիկական հաշմանդամություն ունեցող անձանց համար, քանի որ հանրահավաքներն, ընդհանուր առմամբ, անցկացվում են անմատչելի և մարդաշատ վայրերում:

«Քարոզարշավների ժամանակ չի եղել ժեստերի լեզվի թարգմանություն, այդ իսկ պատճառով ոչ մի բան չեմ հասկացել: Իսկ ընտրությունների ժամանակ ծնողներս են ուղղորդել, թե ում ընտրեմ»:

Լսողության խնդիրներ ունեցող կին, ք. Երևան

«Ինձ ընդհանրապես չեն հետաքրքրում ընտրությունները, և երբեք չեմ մասնակցել, քանի որ չեմ հասկանում նախընտրական քարոզչությունը և չեմ վստահում ոչ մեկի»:

Լսողության խնդիրներ ունեցող քաղաքաբնակ կին

«Լսողության խնդիրներով կանայք համեմատաբար ցածր մասնակցություն են ունենում ընտրություններում՝ քարոզարշավի անմատչելիությամբ պայմանավորված, ընտրությունների նկատմամբ անհետաքրքրության պատճառով: Լսողության խնդիրներով կանայք, հատկապես մարզերում, առավել մեկուսացված են իրենց ընտանիքներում և զբաղված իրենց առօրյա ընտանեկան գործերով: Մինչդեռ լսողության խնդիրներով տղամարդկանց համայնքը առավել ակտիվ է, նրանք ավելի հաճախ են հանդիպում, շփվում և կիսում ինֆորմացիա, ինչը նպաստում է վերջիններիս քաղաքական մասնակցությանը»:

Հաշմանդամություն ունեցող կին, ՀԿ ղեկավար, ք. Գյումրի

Քննարկումների արդյունքում առաջարկվել են հետևյալ լուծումները.

- Հանդես գալ օրենսդրական փոփոխության պահանջ-առաջարկությունով:
  Ընդ որում, հնչեցվել է օրենքը կարգավորող մեխանիզմների բարեփոխման հստակ առաջարկ:
- Կազմակերպել դասընթաց-սեմինարներ լրագրողների համար:
- Մոնիտորինգի ենթարկել լրատվամիջոցները՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության տեսանկյունից:

«Պետությունը պետք է պարտավորվի ֆինանսավորել և վերահսկել հեռուստաընկերությունների աշխատանքը, որպեսզի ապահովի մատչելի ինֆորմացիա տարբեր հաշմանդամություն ունեցող անձանց համար»:

Հաշմանդամություն չունեցող կին, ք. Վանաձոր

«ԶԼՄ-ները պատվիրատուից պետք է վերցնեն հավելյալ գումար ժեստերի լեզվի թարգմանության համար, որպեսզի ինֆորմացիան մատչելի լինի լսողության խնդիր ունեցող անձանց համար»:

Հաշմանդամություն չունեցող կին, ք. Երևան

Ֆոկուս խմբային քննարկում հաշմանդամություն ունեցող գյուղաբնակ կանանց հետ

Հանրային վերաբերմունք

Այս խոչընդոտը կրկին նշվել է համարյա բոլոր քննարկումներում: Հայաստանում չկա բացասական վերաբերմունք հաշմանդամություն ունեցող անձանց հանդեպ, սակայն դեռևս կան թյուր կարծրատիպեր և ընկալումներ հաշմանդամություն ունեցող անձանց կարողությունների և հմտությունների վերաբերյալ: Նրանք դիտվում են որպես խնամքի, պաշտպանության և բարեգործության սուբյեկտ: Շատ հաճախ ավելորդ խնամքն ու ուշադրությունը, հաշմանդամություն ունեցող անձին չվիրավորելու զգուշությունը հանգեցնում են ցածր ինքնագնահատականի և մեկուսացման, որը մեծապես ազդում է քաղաքացիական և քաղաքական կյանքում հաշմանդամություն ունեցող անձի մասնակցության վրա:

> «Ես ընտրություններին մասնակցել եմ որպես դիտորդ: Ընտանիքիս կողմից խոչընդոտ չի եղել, սակայն շրջապատս հորդորում էր չգնամ: Ինձ ասում էին. «Ինչի՞դ է պետք, դու հաշմանդամություն ունեցող կին ես, կհոգնես, հետո այնտեղ վտանգավոր է, քաշքշուկների մեջ կընկնես»: Բայց ես իմ մեջ կամքի ուժ գտա և գնացի: Ոնց որ չէին վստահում ինձ՝ իմ կարգավիճակից ելնելով»:
>
> *Հաշմանդամություն ունեցող գյուղաբնակ կին*

Անմատչելի ֆիզիկական միջավայրը ևս բացասաբար է անդրադառնում հաշմանդամություն ունեցող անձանց նախընտրական քարոզչական գործընթացի վրա:

> «Իմ նախընտրական քարոզարշավի ժամանակ, երբ թիմակիցներս իմ մասին տեղեկատվական թռուցիկներ էին տարածում, շատ մարդիկ նայեցին իմ լուսանկարին և տեսան, որ ես անվասայլակ եմ օգտագործում: Նրանք սկսեցին կասկածել և արտահայտել իրենց մտահոգությունները. «Ինչպե՞ս նա կարող է խորհրդարանում լինել, եթե հազիվ է կարողանում հոգ տանել իր մասին»:
>
> *Քաղաքականությամբ զբաղվող հաշմանդամություն ունեցող կին, ք. Երևան*

«Հայաստանը պատրիարխալ հասարակություն է, և կանանց դերի, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց կարողությունների մասին կարծրատիպերի պատճառով հաշմանդամություն ունեցող կինը հիրավի բախվում է կրկնակի խտրականության»,-նշել են ֆոկուս խմբային քննարկումների մասնակիցները:

> «Պատրիարխալ հասարակությունը և կարծրատիպերը խոչընդոտում են հաշմանդամություն ունեցող կանանց քաղաքական մասնակցությանը: Հասարակությունը մտածում է. «Հերիք չէ հաշմանդամություն ունես, փողոց ես դուրս գալիս: Ի՞նչ ես անում: Գնա հանգիստ նստի տունդ»:
>
> *Հաշմանդամություն ունեցող կին, ք. Երևան*

> «Հայաստանում հաշմանդամություն ունեցող կինը հազար անգամ կմտածի և կվարանի՝ արդյո՞ք արժի գիշերը ուշ ժամի գնա ցույցի, իսկ հաշմանդամություն ունեցող տղամարդը այդ խնդիրը չունի: Քանի որ մենք պետք է տաքսի վերցնենք ցույցի վայր հասնելու համար, մենք, հնարավոր է, արժանանանք հարևանների բացասական գնահատականին, քանի որ կանայք միայնակ տաքսի չեն նստում գիշերվա ժամին»:
>
> *Հաշմանդամություն ունեցող կին, ք. Երևան*

Հանրության մաս հանդիսացող, ընտրություններին հատուկ դերակատարություն ունեցող ընտրական հանձնաժողովների անդամների վերաբերմունքը կարող է ուղղակիորեն խոչընդոտել հաշմանդամություն ունեցող անձի՝ ընտրելու իրավունքի իրացմանը:

Վերջին տասնամյակում հայ հասարակությունը փոխել է իր խտրական վերաբերմունքը ֆիզիկական և զգայական հաշմանդամություն ունեցող անձանց հանդեպ, բայց եթե խոսում ենք հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց մասին, մենք բախվում ենք խտրականության և մի շարք խոչընդոտների:

Հայաստանում անգործունակ ճանաչված հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք քվեարկելու իրավունք չունեն:

Բայց նրանք, ովքեր մասնակցում են ընտրություններին և գնում են քվեարկելու իրենց ընտանիքի անդամների հետ, ընտրատեղամասում իրենց հերթին սպասելու ընթացքում, ենթարկվում են խտրականության ընտրատարածքի այլ աշխատակիցների կողմից: Ընտրատեղամասի աշխատողներից շատերը չունեն հմտություններ և հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց հետ շփվելու ճիշտ վարքագիծ: Միշտ ընտանիքի անդամներն են ուղղորդում իրենց ընտրելիս:

> «Երբ հոգեկան առողջության խնդիրներ և մտավոր հաշմանդամություն ունեցող անձինք մտնում են ընտրատեղամաս, հանձնաժողովի անդամները դժգոհում են»:
>
> *Հաշմանդամություն ունեցող կին, ք. Երևան*

Մեկ այլ խոչընդոտ, որը նշվել էր հետազոտության մասնակիցների կողմից այն էր, որ տղամարդկանց ավելի շատ են վստահում քաղաքականության մեջ, քան կանանց:

> «Իմ քաղաքական ֆրակցիայի շրջանակներում երբեմն զգում էի թերահավատություն իմ հանդեպ: Թեև դա խոսքով չէր արտահայտվում, սակայն ես կարողանում էի զգալ նրանց վերաբերմունքը: Չնայած բոլորը գիտեին իմ մտավոր և առաջնորդական կարողությունների մասին...»:
>
> *Քաղաքականությամբ զբաղվող հաշմանդամություն ունեցող կին, ք. Երևան*

Ֆոկուս խմբային քննարկումներից մենք պարզեցինք, որ նույնիսկ հաշմանդամություն ունեցող տղամարդիկ ունեն կարծրատիպեր հաշմանդամություն ունեցող կանանց քաղաքական մասնակցության վերաբերյալ:

Ֆոկուս խմբային քննարկում հաշմանդամություն ունեցող քաղաքաբնակ կանանց հետ

«Հաշմանդամություն ունեցող կինը կարող է աշխատել, լինել ակտիվ քաղաքացի, բայց նա չի կարող լինել մեծ քաղաքականության մեջ: Քաղաքականության մեջ լինելու համար հարկավոր է շատ հզոր լինել: Կանայք միշտ պետք է լինեն կանացի և նուրբ: Չեմ սիրում, երբ կանայք տղամարդու դեր են ստանձնում»:

Հաշմանդամություն ունեցող տղամարդ, ք. Երևան

Ֆոկուս խմբային քննարկումներում առաջարկվել են մի շարք լուծումներ.

- ՁԼՄ-ների և սոցիալական մեդիայի միջոցով սոցիալական գովազդների և հաջողված պատմություններին անդրադարձող ֆիլմերի տարածում:
- Ներառական կրթություն, որը հեռահար դաստիարակում է մարդու իրավունքների մասին իրազեկ քաղաքացիներին:
- ՀԿ-ների կողմից հանրային վերաբերմունքի փոփոխմանն ուղղված շահերի պաշտպանության նախաձեռնություններ:

Ընտանիքի վերաբերմունք

Հատկապես կանայք նշում են, որ հանրային վերաբերմունքից զատ կարևոր է սոցիալական միկրոմիջավայրը՝ ընտանիքը, որը նպաստող գործոնից բացի կարող է հանդես գալ որպես խոչընդոտ:

Հայ ընտանիքը միշտ հայտնի է եղել իր բարոյական տոկունությամբ և կայուն ավանդույթներով, որտեղ ծնողի և երեխայի միջև կապը շատ ուժեղ է: Եթե խոսենք հաշմանդամություն ունեցող երեխաների մասին, ապա հայ ընտանիքները կարող են չափից ավելի հոգատար և պաշտպանողական վերաբերմունք ցուցաբերել վերջիններիս հանդեպ, ինչը հանգեցնում է նրանց մեկուսացմանը: Սակայն մենք ունենք դեպքեր, երբ ընտանիքները խրախուսում են հաշմանդամություն ունեցող իրենց ընտանիքի անդամին լինել անկախ և հետևել իր նպատակներին:

«Հաճախ հարկ է լինում որոշ տեսակի (լսողության, տեսողության խնդիրներով) հաշմանդամություն ունեցող անձանց մարզերից ուղարկել Երևան՝ հատուկ դպրոցներում սովորելու համար, քանի որ մասնագիտացված դպրոցները միայն Երևանում են: Արդյունքում, հատկապես հաշմանդամություն ունեցող կանայք կրթություն չեն ստանում, մնում են տանը, դառնում են կոմպլեքսավորված և վախկոտ: Եվ ավելի ուշ, երբ նրանց մեջ կա սովորելու ձգտում, մինչև հասնում են արդեն գիտակցական մակարդակի և ուզում են ակտիվ կյանք վարել, շատ անգամ ուշ է լինում ցանկալի արդյունքի հասնելու համար»:

Հաշմանդամություն ունեցող կին, Երևան

Գյուղաբնակ հաշմանդամություն ունեցող կանանց ընտանիքներում հատկապես շատ են ուղղորդում ընտրություն կատարելիս:

«Ես ոչ մեկին չեմ վստահում, բայց ստիպված մասնակցում եմ բոլոր ընտրություններին: Ընտանիքիս անդամները միշտ ուղղորդել են, թե ում ընտրեմ»:

Գյուղաբնակ հաշմանդամություն ունեցող կին

Որպես առաջնահերթ խոչընդոտ՝ ընտրած խմբերը առաջարկում են խնդրի հասցեագրման հետևյալ ուղիները.

- ՀԿ-ների կողմից իրականացվող տեղեկատվական սեմինարներ ընտանիքի անդամների համար,
- ՀԿ-ների կողմից պատվիրակված սոցիալական աշխատողի աջակցությունը/խորհրդատվությունը ընտանիքի անդամներին,
- Պետության կողմից պատվիրակված սոցիալական աշխատողի աջակցությունը/խորհրդատվությունը ընտանիքի անդամներին,
- Սոցիալական գովազդների, մուլտֆիլմերի, ֆիլմերի միջոցով իրազեկման բարձրացումը ԶԼՄ-ով ,
- Ներառական կրթության ապահովում:

> «Այցելելով ներառական դպրոց՝ ընտանիքը հաշմանդամություն ունեցող երեխայի իրավունքներին ծանոթանում է նրա փոքր հասակից: Հետագայում դա ազդում է ինչպես ծնողների ճիշտ մոտեցման, այնպես էլ այլ ոլորտների վրա, բացի կրթությունից»:
>
> *Հաշմանդամություն ունեցող կին, ք. Երևան*

Անմատչելի տրանսպորտ

Քաղաքական մասնակցության խոչընդոտ է դիտարկվում անմատչելի տրանսպորտը, որը հատկապես բարձրաձայնվել և ընտրվել է որպես հասցեագրման առաջնահերթություն հաշմանդամություն ունեցող գյուղաբնակ կանանց և տղամարդկանց խմբերում: Տրանսպորտը հանդիսանում է խոչընդոտ տեղաշարժվելու դժվարություն ունեցող անձանց համար, քանի որ սահմանափակում է վերջիններիս՝ ընտրատեղամաս հասնելու, ցույցերին մասնակցելու, սեփական քարոզչությունն իրականացնելու իրավունքները:

> «Ես մեծ հաճույքով մասնակցում էի Թավշյա հեղափոխությանը, ֆեյսբուքում գրառում էի անում, ասում էի՝ եկեք ինձ տարեք Գյումրի, որ մասնակցեմ ցույցերին, բայց տրանսպորտի հետ կապված խնդիրների պատճառով, չկարողացա գնալ և մասնակցել»:
>
> *Հաշմանդամություն ունեցող գյուղաբնակ կին*

> «Հայաստանում, հատկապես մարզերում և գյուղական վայրերում, անվասայլակով տեղաշարժվող անձանց համար միակ փոխադրամիջոցը տաքսին է: Տաքսու վարորդները հիմնականում տղամարդիկ են, և հաշմանդամություն ունեցող կանայք իրենց հարմար չեն զգում, երբ օտար տղամարդը օգնում է իրենց, փորձում է բարձրացնել կամ իջեցնել ավտոմեքենայից: Այդ իսկ պատճառով նրանք դուրս են մնում քաղաքական շատ գործընթացներից: Հաշմանդամություն ունեցող տղամարդկանց պարագայում այս խնդիրը չկա»:
>
> *Հաշմանդամություն ունեցող կին, ՀԿ ղեկավար, ք. Գյումրի*

Քննարկումների արդյունքում առաջարկված ոչ բազմազան լուծումները բաժանվում են երկու խմբի.

- Դիմում-պահանջ ՏԻՄ-երին, ՀԿ-ներին,
- Ցույցերի միջոցով խնդրի բարձրաձայնում:

Հաշմանդամություն ունեցող կանանց անինքնավստահություն

Քննարկումների ընթացքում կարծիքներ հնչեցվեցին, որ հաշմանդամություն ունեցող անձանց անինքնավստահությունը բխում է վերջիններիս անպատրաստվածությունից, շրջապատի վերաբերմունքից, ընդհանուր առմամբ սոցիալապես ներառված չլինելուց:

> «Հաշմանդամություն ունեցող կանանց մտածողությունը, ներքին անպատրաստվածությունը, վախերը և ինքնավստահության պակասը մեծ ազդեցություն ունեն նրանց քաղաքական մասնակցության վրա: Հաշմանդամություն ունեցող կինը լրիվ տարբերվում է հաշմանդամություն ունեցող տղամարդուց, քանի որ փոքրուց ընտանիքում տարբեր դաստիարակություն են ստանում»:
>
> *Հաշմանդամություն ունեցող կին, ք. Երևան*

> «Իմ կյանքում եղել է մի շրջան, երբ ես ինքս ինձ մեկուսացած էի պահում: Սակայն, երբ հնարավորություն ստացա ծանոթանալ հաշմանդամություն ունեցող այլ անձանց հետ ու քայլ արեցի, ավելի ակտիվ դարձա: Ուստի շատ կարևոր է ներքին ինքնավստահությունը»:
>
> *Հաշմանդամություն ունեցող գյուղաբնակ կին*

Համապատասխանաբար առաջարկվեցին խնդրի կարգավորման հետևյալ առաջարկները:

- Պետության կողմից հաշմանդամություն ունեցող առաջնորդ կանանց կարողությունների զարգացում և նրանց օրինակով մյուսների քաղաքական գիտակցության բարձրացում:
- Հաշմանդամություն ունեցող անձանց իրազեկվածության բարձրացում՝ ՀԿ-ների կողմից կազմակերպվող իրավունքի թեմայով դասընթացների և սեմինարների միջոցով:
- Հանրային վերաբերմունքի բարելավում՝ հեռուստահաղորդումների, իրազեկման ակցիաների միջոցով:
- ՀԿ-ների կողմից կազմակերպվող հոգեբանական անհատական կամ խմբակային զրույցներ, որոնք կնպաստեն բարդույթները կառավարելու հմտությունների զարգացմանը:
- ՀԿ-ների կողմից հաշմանդամություն ունեցող կանանց ընտանիքի անդամների կարողությունների զարգացում:
- Հաշմանդամություն ունեցող կնոջ կարողությունների զարգացումը նաև կնպաստի հանրային վերաբերմունքի բարելավմանը:

> «Եթե հաշմանդամություն ունեցող կինը իրազեկվի և իր օրինակով իրազեկի հասարակությանը, հասարակությունն էլ իր վերաբերմունքով կնպաստի կնոջը: Այսինքն փոխկապակցված վերաբերմունքի փոփոխություն է»:
>
> *Հաշմանդամություն ունեցող կին, ք. Երևան*

Սոցիալական վիճակ

Սոցիալական վիճակը խոչընդոտ է հանդիսանում քաղաքական մասնակցության համար, քանի որ անդրադառնում է անձի հաղորդակցական կարողությունների վրա, ինչը ժամանակակից պայմաններում առանցքային գործոն է քաղաքական ներառման համար:

> «Օրինակ՝ համացանցից անընդհատ օգտվելու հնարավորության բացակայությունն անդրադառնում է քաղաքական անցուդարձի վերաբերյալ իրազեկված և ըստ այդմ քաղաքական դիրքորոշում ձևավորելու վրա»:
>
> *Հաշմանդամություն ունեցող կին, ք. Երևան*

Ըստ ՖԽՔ մասնակիցների՝ հետևյալ միջոցառումները կարող են ուղղակի կամ անուղղակի ձևով նպաստել այս խոչընդոտի կարգավորմանը:

- Պետության կողմից աշխատատեղերի ստեղծում,
- Պետության կողմից թոշակների բարձրացում այն անձանց համար, ովքեր անաշխատունակ են,
- Անվճար տրանսպորտի տրամադրում,
- Բարեգործական և հասարակական կազմակերպությունների կողմից հաշմանդամություն ունեցող կանանց համար բիզնես դասընթացների կազմակերպում,
- Հաշմանդամություն ունեցող կանանց կարողությունների զարգացում մատչելի մասնագիտական կրթության ապահովման միջոցով, որպեսզի վերջիններս լիարժեք մրցունակ դառնան աշխատաշուկայում:

Ոչ ներառական օրենսդրություն

Օրենքի ոչ ներառականությունը՝ ի դեմս հաշմանդամություն ունեցող կանանց համար քվոտաների բացակայության

- Հատուկ խմբերի, կոալիցիաների ստեղծում և մոբիլիզացիա, որոնք կբարձրացնեն հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքները,
- Օրենքի բարեփոխումների վերաբերյալ կոալիցիաների առաջարկությունների ջատագովում,
- Հաշմանդամություն ունեցող կանանց ներգրավումը օրենքի քննարկումներին:

Ոչ ներառական մանկություն

Ներառական մանկությունը, որի հիմնական բաղադրիչը ներառական կրթությունն է, նպաստում է համապատասխան դիրքորոշման ձևավորմանը թե՛ հաշմանդամություն ունեցող կնոջ, թե՛ վերջինիս ընտանիքի անդամների մոտ: Այս դիրքորոշումն իրենից ներկայացնում է մարդու կրթության իրավունքի և սոցիալական կյանքի այլ ոլորտներում լիարժեք մասնակցության գիտակցումը, որն անդրադառնում է նաև քաղաքացիական և քաղաքական մասնակցության վրա: Ներառական կրթական համակարգը մանկապարտեզից սկսած կարող է վերացնել այս խոչընդոտը:

Այլ խոչընդոտներ

Այլ խոչընդոտների շարքում նշվել են ընտրական թերի ընթացակարգերը՝ գաղտնիության հետ կապված, քարոզարշավ իրականացնելու տեխնիկական խնդիրները հաշմանդամություն ունեցող թեկնածուների համար, քաղաքապետարանի և մյուս պետական շինությունների ֆիզիկական անմատչելիությունը քաղաքական ակտիվիստների համար, ովքեր ունեն հենաշարժողական խնդիր: Նաև խոսվել է կոռուպցիոն ռիսկերի, մասնավորապես սպառնալիքի մասում, որում ավելի խոցելի են հաշմանդամություն ունեցող կանայք:

> «Մեր գյուղապետի և իմ միջև կա լարվածություն, քանի որ ես մերժել էի իր քույրիկի առաջարկությունը, որ ընտրությունների ժամանակ կողմ քվեարկեի իր եղբոր թեկնածությանը: Իր ընտրվելուց հետո բավականին խոչընդոտների առջև եմ կանգնել, բայց այդ խոչընդոտները չեն փոխել իմ մտածելակերպը: Տարիներ առաջ, երբ իրազեկված չէի իմ իրավունքներին, ես էլ էի կատարում իրենց թելադրանքները, բայց մասնակցելով բազմաթիվ սեմինարների, հանդիպումների՝ ձեռք բերեցի հմտություններ և կարող եմ պաշտպանել սեփական իրավունքներս»:
>
> *Հաշմանդամություն ունեցող գյուղաբնակ կին*

Նպաստող գործոններ

Քննարկումները ցույց տվեցին, որ հաշմանդամություն ունեցող կանանց քաղաքականությամբ զբաղվելու խթանները ավելի քիչ են, սակայն առկա են որոշ սպեցիֆիկ գործոններ, հատկապես.

- *Հանրային վստահությունը.* քննարկումների որոշ մասնակիցներ հավատացած են, որ հաշմանդամություն ունեցող կանայք ավելի բարձր վստահություն են վայելում ընտրողների շրջանում: Հայաստանում, երբ հաշմանդամություն ունեցող կինը ներգրավված է քաղաքականության մեջ և որպես թեկնածու մասնակցում է ընտրություններին, հանրությունն, ընդհանուր առմամբ, հարգում է նրան, քանի որ նա շատ դժվարությունների է բախվել և հաղթահարել է բազում մարտահրավերներ իր կյանքում և, ընտրվելու պարագայում, նա կանի ամեն ինչ իր համայնքի և երկրի բարելավման համար:
- *Միջազգային պարտավորություններ*. Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիան (CEDAW) և դրա Կամընտիր արձանագրությունը, Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան (CRPD), Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան և Կամընտիր արձանագրությունը, ՄԱԿ-ի Համընդհանուր պարբերական դիտարկումը (UPR), Կայուն զարգացման նպատակները (SDGs) և պարտավորվում է ներգրավել թե՛ կանանց, թե՛ հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական կյանքի տարբեր ոլորտներում, այդ թվում քաղաքականության մեջ:
- *Հանրային իմիջ.* Սա արդեն նոր հասարակական պահանջ է: Վերջին խորհրդարանական ընտրությունների ժամանակ քաղաքական կուսակցությունները որպես թեկնածուներ ներգրավել էին հաշմանդամություն ունեցող չորս կանանց: Նրանց ներգրավվածությունը

քաղաքական կուսակցությունների միջև «մրցակցություն» էր՝ ցույց տալու իրենց ներառականությունը:

> «Քաղաքական կուսակցությունները կամ որոշակի կառույցներ, ովքեր ներգրավում են հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի մեջ՝ զուտ իրենց կազմակերպության վարկանիշը բարձրացնելու համար»:
>
> *Հաշմանդամություն ունեցող կին, ք. Երևան*

- *Հանդուրժողականություն.* Քաղաքականության մեջ հաշմանդամություն ունեցող կանանց նկատմամբ քննադատությունը շատ մեղմ է: Քանի որ քաղաքականության մեջ հաշմանդամություն ունեցող կանայք ընկալվում են որպես ավելի թույլ փոքրամասնություն, այլ քաղաքական խմբակցության ներկայացուցիչները փորձում են ավելի զգույշ լինել, որպեսզի չվիրավորեն նրանց, քանի որ նրանք քաղաքականության մեջ չեն տեսնում հաշմանդամություն ունեցող կանանց որպես իրական սպառնալիք:

> «Երբեմն ես քննադատում էի քաղաքական այլ կուսակցությունների ներկայացուցիչներին, բայց նրանք ավելի հանդուրժող էին իմ հանդեպ: Նրանք ինձ չէին թիրախավորում, և նրանց քննադատությունը շատ մեղմ էր: Կարծում եմ, որ դա պայմանավորված է նրանով, որ ես անվասայլակ օգտագործող կին եմ»:
>
> *Քաղաքականությամբ զբաղվող հաշմանդամություն ունեցող կին, ք. Երևան*

- *Զանգվածային լրատվամիջոցների լուսաբանում.* մասնակիցները արձանագրում են ԶԼՄ-ների կողմից հաշմանդամության հիմնախնդրի լուսաբանման դրական միտում, հատկապես հաջողված պատմությունների ներկայացումը:

Ֆոկուս խմբային քննարկում հաշմանդամություն չունեցող քաղաքաբնակ և գյուղաբնակ տղամարդկանց հետ:

Առաջարկություններ Պետությանը

Օրենսդրական բարեփոխումներ

- Վերանայել և փոփոխություններ կատարել ՀՀ ընտրական օրենսգրքում

Քվեարկությանը մասնակցելու դժվարություններ ունեցող ընտրողների համար քվեարկությունը մատչելի դարձնելու նպատակով լրացուցիչ հնարավորություններ սահմանելու մասին ՀՀ 2016թ.-ի որոշումը լիարժեքորեն չի ապահովում տարբեր տեսակի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքը բոլորի հետ հավասար պայմաններում մասնակցելու ընտրություններին և չի ծածկում խտրականության բոլոր այն դրսևորումները, որոնց բախվում են հաշմանդամություն ունեցող անձինք՝ բուն ընտրությունների և նախընտրական փուլում քաղաքական ներգրավման ընթացքում:

- Տարբեր տեսակի հաշմանդամություն ունեցող անձանց համար ապահովել ընտրական քարոզարշավի մատչելիություն (այդ թվում՝ լսողության խնդիրներ ունեցող անձանց համար ժեստերի լեզվով թարգմանություն, մտավոր հաշմանդամություն և սովորելու դժվարություններ ունեցող անձանց համար մատչելի և հեշտ / պարզ ընթերցվող ձևաչափով տեղեկատվություն),
- Վերանայել և ապահովել անգործունակ ճանաչված անձանց ընտրելու իրավունքը,
- Հաշմանդամություն ունեցող կանանց քաղաքական մասնակցությանը նպաստելու նպատակով ԱԺ-ում ընտվելու համար ժամանակավոր քվոտաների սահմանում,
- Սոցիալական աշխատողի ինստիտուտի զարգացում:

Սոցիալական աշխատողը կնպաստի հաշմանդամություն ունեցող կանանց և վերջիններիս կարողությունների զարգացմանը՝ իրավունքի և շահերի պաշտպանության, ինչպես նաև քաղաքացիական գիտակցության ոլորտներում:

- Որակյան ներառական կրթության ապահովում

Դպրոցներում և մանկապարտեզներում իրականացվող ներառական կրթությունը, որոնց տարածքներում նաև տեղի են ունենում ընտրությունները, ապահովում են ոչ միայն հաշմանդամություն ունեցող երեխայի կրթությունը, այլև կրթում են վերջինիս ընտանիքին և համայնքին, տալիս գործնական պատկերացումներ մարդու իրավունքների և ներառականության վերաբերյալ:

- ՁԼՄ-ների մատչելիության վերահսկում

Պետությունը պետք է երաշխավորի ՁԼՄ-ների քաղաքական բովանդակության մատչելիությունը՝ այդպիսով նպաստելով հաշմանդամություն ունեցող անձանց քաղաքական ներգրավվածության (իրազեկված լինելու) հնարավորությանը, որը հիմք կհանդիսանա քաղաքական մասնակցության համար:

- ԿԸՀ կողմից իրականացվող վերապատրաստումները ընտրական հանձնաժողովներում ընդգրկված անձանց համար պետք է ներառի ինֆորմացիա հաշմանդամություն ունեցող անձանց սպասարկելու և շփվելու հմտությունների և էթիկայի վերաբերյալ:
- Ապահովել մատչելի հանրային տրանսպորտի առկայությունը ամբողջ Հայաստանում և վերանայել ՀՀ հանրային տրանսպորտի մասին հրամանագիրը՝ պարտադիր պայման

սահմանելով, որ բոլոր նոր գնվող ավտոբուսները լինեն մատչելի տարբեր հաշմանդամություն ունեցող անձանց համար:

- Ապահովել հաշմանդամություն ունեցող կանանց և նրանց կազմակերպությունների մասնակցությունը քաղաքականությունների և օրենսդրության մշակման բոլոր գործընթացներում:
- Մշտադիտարկում և տվյալների հավաքագրում
  Պետությունը պետք է վերահսկողություն և մշտադիտարկում իրականացնի ընտրության բոլոր փուլերի ընթացքում, հավաքի և տրամադրի հստակ վիճակագրություն ընտրական ամբողջ գործընթացի վերաբերյալ՝ հաշմանդամության և գենդերային զգայունության տեսանկյունից:

Առաջարկություններ ՀԿ-ներին/ Քաղաքացիական հասարակությանը

- Հանրային վերաբերմունքի բարելավմանը և իրազեկվածության բարձրացմանն ուղղված շահերի պաշտպանություն:
- Քաղաքական մասնակցության իրավունքի և դրա լիարժեք իրացման վերաբերյալ հաշմանդամություն ունեցող կանանց համար դասընթացների կազմակերպում:
- Քաղաքացիական մոնիտորինգ նախաձեռնություններ՝ հատկապես նախընտրական և ընտրությունների փուլերում:

Ամփոփում

Գծապատկեր 1-ում ներկայացված են հետազոտության երեք առանցքային բացահայտումները. 1) հաշմանդամություն ունեցող կանանց քաղաքական մասնակցությունն ապահովող առանցքային իրավունքը՝ մասնակցությունն ընտրություններին, չի ապահովվում պետության կողմից: 2) երբ հաշմանդամություն ունեցող կանանց իրազեկությունը բարձրացվի, նրանք կիզորանան, կհաղթահարեն իրենց ներքին մտավախությունները, արագ կզարգացնեն իրենց կարողությունները և հմտությունները և կդառնան ակտիվ ինչպես քաղաքացիական, այնպես էլ քաղաքական կյանքում, և 3) հաշմանդամություն ունեցող կանայք կարող են հայտնաբերել և գնահատել խտրականությունը:

Ավելին, ինչպես ակնկալվում էր, հաշմանդամություն ունեցող անձինք լավագույնս են տիրապետում իրենց քաղաքական մասնակցության խոչընդոտներին և դրանց լուծման ուղիներին:

Հետազոտության մասնակիցները տեսնում են խոչընդոտները հասցեագրող երեք գործոններ, ինչպես ներկայացված է ստորև սխեմայում: Այս գործոններից յուրաքանչյուրի դերը աճում կամ նվազում է՝ կախված խոչընդոտի բնույթից:

Գծապատկեր 1



Հաշմանդամություն ունեցող կանանց քաղաքական մասնակցությանը նպաստող գործոն են Միջազգային կոնվենցիաները և դրանցից բխող պարտավորությունները, որոնք ստանձնել է պետությունը: Մեկ այլ հնարավորություն է ներքաղաքական միտումը. կուսակցությունների համար վարկանիշի բարձրացում է իրենց շարքերում կին կամ հաշմանդամություն ունեցող անձ ընդգրկելը: Չնայած այս գործոնները նպաստում են հաշմանդամություն ունեցող կանանց պաշտոնների զբաղեցմանն ու քաղաքականությամբ զբաղվելուն, դրանք դեռևս համակարգային լուծում չեն տալիս քաղաքական հիմնարար իրավունքի՝ ընտրություններին հավասարապես մասնակցելու իրավունքի իրացմանը:

«Հաշմանդամություն ունեցող կանանց քաղաքական մասնակցությունը. խոչընդոտներ և առաջարկություններ» հետազոտությունն իրականացրել է «Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ-ն «Դեպի ներառական ընտրություններ» ծրագրի շրջանակներում՝ Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամի (IFES) աջակցությամբ: «Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոնի այս զեկույցը իրականացվեց Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) AID-OAA-LA-13-00011 դրամաշնորհով: Այստեղ արտահայտված տեսակետները կամ զեկույցի բովանդակությունը պատկանում են միմիայն հեղինակ(ներ)ին և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները»:

Նկարը՝ Լիլիան Գալստյան

Գյումրի 2018